

ԵՂԻԱԶԱՐ ԱՌՆՋԵՑԻՆ ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայ բառարանագրությունն ունի երկարատև և հարուստ պատմություն։ Այն սկիզբ է առնում գրավոր շրջանի արշալույսին և անընդհատ զարգացմամբ հասնում է մինչև մեր օրերը։ Հայտնի են ձեռագիր ավանդված և տպագիր լույս տեսած բազմաթիվ մեծ ու փոքր բառարաններ, որոնք ունեն ճանաչողական որոշակի նշանակություն, կազմում են հայ գրավոր մշակույթի մի ուրույն, ինքնատիպ մասը։ Հայերեն բառարաններում, բնականաբար, իրենց բառային արտացոլումն են ստանում մեր իրականության, նրանում տարբեր ժամանակներում տեղի ունեցած հասարակական-քաղաքական, պետական-տնտեսական և գիտական-մշակութային կյանքի կարևոր իրողություններ, հարևան ժողովուրդների ու ազգերի վերաբերյալ խիստ արժեքավոր, հաճախ անփոխարինելի տվյալներ ու տեղեկություններ։

Հայ լեզվաբանության մեջ բավական մեծ ուշադրության են արժանացել բառարանագրության պատմության հարցերը, իսկ տեսությունը մի տեսակ մնացել է ստվերում։ Նվ ըստ այդմ էլ բավարար չափով ուսումնասիրված է հայ բառարանագրության պատմությունը։ Հրապարակի վրա են բառարանագրության պատմությանը նվիրված հատուկ աշխատություններ, այլ կարգի աշխատություններում հատկացվում են առանձին բաժիններ¹։ Վերջին ժամանակներս առանձին քննության են առնվում բառարանագիտության տեսական հարցերը, ինչպես նաև հայերեն այս կամ այն բառարանի տեսական վերլուծության ընթացքում շոշափվում է այդ հարցերի որոշակի մասը²։ Այնուհետև, զգալի թվով բառարաններ արժանացել են կոնկրետ գնահատության, վեր է հանված դրանց դերն ու կարևորությունը հայ բառարանագրության զարգացման ընթացքում³։ Այդուհանդերձ, հայ բառարանագրության թե՛ պատմության և թե՛ մանավանդ տեսության շատ հարցեր դեռևս մնում են չլուծված, եթե չասենք ամենևին չքննված։ Այդ ուղղությամբ բոլորովին վերջերս են արվում կարևոր քայլեր։

1 Տե՛ս Հ. Ամալյան. Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ. հ. 1, 2, Երևան, 1966, 1971, Գ. Գապարյան. Հայ բառարանագրության պատմություն. Երևան, 1967, է. Աղայան. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984, էջ 357—368։ Այս աշխատության բառագիտական մասը նախապես լույս է տեսել իրեն դասագրքի մի բաժին (Գ. Բ. Զահուկյան, է. Բ. Աղայան, Վ. Գ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան. Հայոց լեզու, I մաս, Ա պրակ. Ներածություն, Հնչունաբանություն, Բառագիտություն, Դարձվածաբանություն. Երևան, 1980, էջ 187—473, 512—524), իսկ տերմինագիտականը՝ առանձին (է. Բ. Աղայան. Տերմինագիտություն. Երևան, 1978)։ Ա. Սուքիասյան. Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1982, էջ 397—436։

2 Տե՛ս, օրինակ, է. Աղայան. նշվ. աշխ., էջ 357։ Ա. Սուքիասյան. Հայ բառարանագրության նվաճումները խորհրդային իշխանության տարիներին.— Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Զեկուցումներ. Երևան, 1984, էջ 808—816։

3 Նշենք դրանցից մի քանիսը. Լ. Պետրոսյան. Ստեփանոս Մախաթանցի «Հայերեն բացատրական բառարանը».— Լեզվի և ոճի հարցեր (հոգվածների ժողովածու) հ. 1, Երևան, 1960, էջ 382—407, Ռ. Ղազարյան. Նոր հայկազյան բառարանը.— «Բանբեր Երեւմանի համալսարանի», 1968, № 2, էջ 234—238, Վ. Համբարձումյան. Հայերեն ձեռագիր բառակազմական բառարանը.— «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, № 11, էջ 70—77 և այլն։

Արդի հայերենագիտության առաջնահերթ խնդիրներից է բառարանագիտական լայն աշխատանքների ծավալումը: Այդ առումով միանգամայն տեղին է հայ բառարանագրական հուշարձանների համակողմանի և խորը վերլուծությունը՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից և ընդգրկումից, բնույթից ու կարևորությունից:

XIX դարում մեզանում ստեղծվում են անսխառագիթ թվով ձեռագիր և տպագիր բառարաններ: Դրանց հիմնական մասը արժանացել է բառարանագիտական քննության: Սակայն կան նաև այնպիսիները, որոնք կամ պակաս չափով են քննված, կամ ամենևին չեն արժանացել որևէ ուշադրության: Այս կարգի բառարանների ուսումնասիրությունը ոչ միայն լրացնում է բացթողումը կամ եղած թերին, այլև հետագա աշխատանքների ձեռնարկման հնարավորություն է ընձեռում: Դրանք կարևորագույն աղբյուր են հայերենի բառարանագիր պատմության համար: Ուստի այդ շրջանից մեզ հասած բառարանների մնացած մասի հանգամանակից քննությունն անհետաձգելի գործ է: Նոր գրական հայերենի ձևավորման, զարգացման և ներկայիս առաջնթացի շատ հարցեր իրենց լիարժեք պարզարանումը կարող են ստանալ անցյալի գրավոր աղբյուրների, մանավանդ հայերեն բառարանների մանրակրկիտ և խորամուխ հետազոտության միջոցով: Այդ բնագավառում ևս կարելի է մեծ աշխատանք ծավալել, և դա լինելու է արդի հայերենագիտության զարգացման լավագույն երաշխիքներից մեկը: Այս տեսակետից էլ, ահա, հարկ ենք համարում անդրադառնալ XIX դարի հայ բառարանագիր Եղիազար Առնշեցու (Տեր Կարապետյան) գործին, ի նկատի ունենալով այն, որ հայ բառարանագրության ամեն մի հուշարձան (հայերեն ամեն մի բառարան) պետք է դառնա հատուկ ուշադրության առարկա և քննության առնվի ըստ ամենայնի:

Եղիազար Առնշեցին մի անհայտ և անծանոթ անուն չէ հայ գրավոր մշակույթի պատմության մեջ: Դատելով մեզ հասած սուղ, կցկտուր տվյալներից, նա պիտի ապրած լինի էջմիածնի հոգևորական միջավայրում, որտեղ եկեղեցական առօրյա աշխատանքին զուգակցել է դրական-բառարանագրական համեստ գործունեությունը: Նրա մասին տեղեկություններ են ամփոփված Ծրեվանի Մաշտոցի անվան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ում⁴: Այդ գրքի Ա հատորի «Անձնանունների ցանկից» տեղեկանում ենք, որ Եղիազար Առնշեցին հանդիսանում է գրիչ և հեղինակ «Համառոտութիւն ճարտասանութեան» (գրված 1839 թ.) աշխատության: Նրա այդ աշխատությունը գետնից է առնվում Մաշտոցի անվան Մատենադարանի № 3362 ձեռագրում (այսուհետև՝ ՄՄՁ)⁵: Իսկ գրքի Բ հատորի «Անձնանունների ցանկում» նշվում է, որ նա եղել է գրիչ, Թարգմանիչ և հեղինակ: Թարգմանել է «Մաղկաքաղ ընթերցուածք ի Հնոյ Կտակարանէ» գործը, հեղինակել «Բառգիրք գրոցս ի հայ և ի ռուս լեզու» երկը: Դրանք գետնից ենք գտնում ՄՄՁ 6418-ում⁶: Այնուհետև, Եղիազար Առնշեցու մասին տվյալներ ենք գտնում նույն գրքի այն հատվածներում, որտեղ բերվում է հիշյալ ձեռագրերի նկարագրությունը: Այսպես, ՄՄՁ 3362-ի դեպքում առավել կարևոր են հետևյալ հանգամանքները. ա) ձեռագիրը ներկայացվում է Եղիազար Առնշեցու «Համառոտութիւն ճարտասանութեան» վերտառությամբ, բ) այն գրվել է 1839 թ., էջմիածնում, գ) ձեռագրի գրիչն ու հեղինակը նույն անձն է՝ Եղիազարը, դ) պարունակում է ևս մեկ գործ՝ «Նորին բառք նորաձևք մատենիս» հորոշորչումով⁷: Իսկ ՄՄՁ 6418-ի դեպքում առավել ուշագրավ են հետևյալները. ա) ձեռագիրը ներկայացված է իբրև «Մաղկաքաղ ընթերցուածք ի Հնոյ Կտակարանէ», բ) այն գրված է XIX դարում, գ) գրիչը և Թարգմանիչը նույն ինքը Եղիազարն է, դ) պարունակում է ևս մեկ երկ՝ «Թարգմանի բառգիրք գրոցս ի հայոց ի

4 Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Կ. Ա, Բ, Երևան, 1965, 1970 (այսուհետև՝ ՄՄՁ):

5 Նույն տեղում, Կ. Ա, էջ 1489:

6 Նույն տեղում, Կ. Բ, էջ 1307:

7 Նույն տեղում, Կ. Ա, էջ 996:

ուսւ լեզու» վերնագրով⁸։ Ուրեմն, ըստ ՄՄՁ 3362-ի տվյալների Եղիազար Առնշեցին հեղինակ է երկու աշխատության՝ «Համառոտութիւն ճարտասանութեան» (էջ 4ա—92բ) և «Բառք նորաձև մատենիս» (էջ 93ա—111ա)։ Իսկ ըստ ՄՄՁ 6418-ի նա թարգմանիչն է «Պատմաբանական ընթերցանութիւն ի Գրոց Հին կտակարանաց» (էջ 1ա—141ա) և հեղինակ «Համառոտ բառարան ի հայոց ի ուսաց, յաղագս բառից պարունակելոց յայսմ սրբազան պատմութեան» (իմա՝ նախորդի—Վ. Հ., էջ 142ա—158ա)։ Դժվար չէ նկատել, որ բերված գործերից երկուսը իրենց բուն վերնագրերով տարբերվում են ՄՄՁ3-ի նշանակածներից։ Դրանից բացի հարկ է նշել, որ Եղիազար Առնշեցին բառարանագրական աշխատանքը զուգակցել է բանասիրական-թարգմանականին։

Ստացվում է, որ Եղիազար Առնշեցին հեղինակ է «Ճարտասանութիւն» աշխատության և երկու բառարանի, թարգմանիչ՝ մեկ այլ երկի։ Նա ինքն է իր աշխատությունների «գրիչը»։ Այդ նշանակում է, որ նրա անունով մեզ հասած հիշյալ երկու ձեռագրերը ինքնագիր են։

Այսպիսով, բնագրագիտական-աղբյուրագիտական քննությունից պարզվում է, որ Եղիազար Առնշեցին հայ գրավոր մշակույթի գործին ծառայել է որպես հեղինակ, թարգմանիչ և «գրիչ»։ Նա գրել է «Ճարտասանութիւն» բավական ընդարձակ աշխատությունը, կազմել նրա տերմինների բառարանը («տերմինարանը»), թարգմանել է «Հին Կտակարանի» մի համառոտությունը և կազմել վերջինիս ձգվարիմաց բառերի բառարանը, ըստ որում հայերեն-ուսերեն զուգադրությամբ։ Այդ մասին հեղինակն ունի հատուկ ծանուցում. «Յօրինեալ ի թարգմանչէ սորին յԵղիազար աբեղայէ Տէր Կարապետեան Առնշեցոյ» (ՄՄՁ 6418, էջ 142ա)։ Իսկ լեզվաբանական-բառարանագիտական քննության տեսակետից ուշադրության առարկա են Եղիազար Առնշեցու հիշյալ ձեռագիր երկերից երկուսը՝ ճարտասանական տերմինների բառարանը և հայ-ուսերեն բառարանը։ Ստորև տալիս ենք դրանց բառարանագիտական վերլուծությունը։

Նախ, առաջինի մասին։

Ձեռագրում այն կոչվում է՝ «Բառք նորաձև համառոտ մատենիս ի վերայ այբուբենից արարեալ յաշխատասիրողէ սորին» (ՄՄՁ, 3362, էջ 93ա), ընդգրկում է ձեռագրի 93ա—111ա էջերը։ Մովալով, ինչպես տեսնում ենք, այնքան էլ մեծ չէ (ընդամենը 37 էջ)։

Սույն բառարան-բառացանկը կազմելու վերաբերյալ հեղինակը նույն ձեռագրի սկզբում նշում է մանրամասներ։ Նախ, կազմվել է հիմնական գործի ավարտից հետո, նպատակ ունենալով հետևյալը. «Ձեռքն ի գործ եղեալ՝ արարի ի վերջոյ զբառարան յինքեան պարունակեալ բառիցն երեսահամար թուովն ի վերայ այբուբենիցն, յաղագս մերձ առ ձեռն պատրաստ ունելոյ համբակաց. և մի՛ ժամավաճառ լինելով պատաղիլ տարապարտուց ի զանազան բառարանս գուցէ թէ և ի նոսա... զխնդրելին ո՛չ դատնիցեն» (էջ 3բ)։ Երկրորդ, ինչպես դժվար չէ նկատել, բառացանկն ունի խիստ գործնական բնույթ, ծառայում է հիմնական նյութի ծանուցումն ու յուրացումը հեղատացնելու նպատակին՝ շեշտելով հետևյալը. «Ուրեմն խնդամիտ յօժարութեամբ ընկալիք զիմ նուէր սիրոյ՝ գիրկս (փխ. Բ-ով կամ առանց դրա—Վ. Հ.) աշխատանաց յարգանս և յօգուտ հայազգի մանկանց լուսաւորութեան կաթողիկէ եկեղեցոյ» (ն. տ.)։

Այս ձեռագրի բառարանի մասին հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատություններում ոչինչ չի ասված։ Այն բավական ուշագրավ է բառահոգվածի մշակման տեսակետից. բերվում է գլխաբառը, նըշվում նրա քերականական բնութագիրը (հոլովումը, խոնարհումը և այլն), այնուհետև տրվում է դիպուկ, սեղմ և որոշակի բացատրությունը, իսկ վերջում գրվում է բնագրի այն էջը, որտեղ այն գործածված է։ Ուստի կարելի է ասել, որ գործ ունենք իր բնույթով բացատրական բառարանի հետ։ Դա է

⁸ Նույն տեղում, հ. Բ, էջ 315։

համաստեղային հետևյալ հիշատակությունը, որը դրված է վերջում. «Հարկադրված համառոտ մատենին գրեցան հանդերձ նշանակություն» (էջ 111ա): Իբրև նմուշ բերենք հետևյալ բառահոգվածը. «Ազնուապետություն, բեան, բեամբ, բեանց, բեամբք: է բառ բարդ, ունի յինքեան զերկուս նշանակություն, որով իմանամք ազնուաց գլխաւորն կամ գլխաւորութիւնն. երես 128» (էջ 93ա, ընդգծումը մերն է—Վ. Հ.): Ամփոփ ձևով կարելի է ասել, որ Նշանակաբանականության կառուցված է շրջաբանով՝ գլխաբան, քերականական նշում, բացատրություն և բնագրի էջի հղում: Բացատրությունները սովորաբար վերաբերում են բառերի բնագրային բուն կիրառությանը պայմանավորված, քան թե առհասարակ առաջնային համարվող իմաստներին, և դա կարևոր է ամեն մի նման բառարանի համար⁹:

Բառարանը պարունակում է 521 բառահոգված: Հաշվել ենք նաև բառահոգվածներն ըստ էջերի: Պարզվում է, որ յուրաքանչյուր էջ միջին հաշվով պարունակում է փոքր-ինչ ավելի քան 14 բառահոգված. ամենաբազմաբան էջ 93ր-ն է, որ ունի 18, իսկ ամենանոսրը՝ էջ 111ա-ն, ունի 7 բառահոգված: Նման տատանումն, անշուշտ, բացատրվում է բառահոգվածների մեկնաբանումների ծավալի զգալի տարբերությամբ: Իսկ առհասարակ այդ մեկնաբանումները բավական միօրինակ են և համաչափ:

Բառարանը, բացի նշվածներից, ներկայացնում է հայերենի բառապաշարի ընդգրկման հետ կապված որոշակի առանձնահատկություններ: Դրանք մասամբ վերաբերում են մասնավոր դեպքերի, իսկ հիմնականում կապվում են նորակազմ կամ, այլ կերպ ասած, այլ բառարաններում չբառարանագրված բառերի հետ: Նշենք դրանցից մի քանիսը:

Հանդիպում են ոչ միայն բառային, այլև բառակապակցական տերմիններ: Օրինակ՝ կերպարանաց նախադասություն (էջ 99բ): Բառարանում գրեթե բացակայում են օտար բառերը (բացառությամբ երկուսի՝ հոգևոր, էջ 101ա, մասնակց, էջ 103ա, որոնք շատ հին փոխառություն են):

Առավել կարևոր են նորակազմ բառերի հետ կապված առանձնահատկությունները: Այսպես, հանդիպում են այնպիսի բառեր, որոնք չկան հին շրջանի հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններից, օրինակ, «նոր հայկազյան բառարանում» (հհ. Ա, Բ, Վենետիկ, 1836, 1837, այսուհետև՝ ՆՀԲ): Ըստ այդմ դրանք հիմնականում պիտի դիտել իբրև իր ժամանակի հայերենի բառապաշարի տարրեր, որոնք գործածված ենք գտնում սույն բառարանում կամ էլ մասամբ (որոշ վերապահությամբ) թերևս հեղինակի կողմից ձևակերպված թարգմանություններում բերված տեղ գտած նորակազմություններ (այլ կերպ ասած՝ դիպվածային կազմություններ. օրինակ բնական «Բեռնի վանդ»՝ էջ 94բ): Բոլոր դեպքերում կարելի է նշել հետևյալը. քանի դեռ մեզանում չեն պարզաբանվել այդ կարգի նորակազմությունների բնագրային (ոչ բառարանագրական) աղբյուրները, այդքան ժամանակ դրանց համար սույն բառարանն ունենալու է այդպիսի աղբյուրի արժեք: Եվ սա շատ կարևոր է Նշանակաբանականության սույն բառարանի գնահատության համար: Այն, իրոք, այսօր ունի գրավոր աղբյուրի արժեք և ըստ այդմ էլ կարող է նյութի տրամադրել հայոց լեզվի պատմական բառարանի համար: Ժիշտ է, չբառարանագրված բառերն այստեղ այնքան էլ մեծ թիվ չեն կազմում (20-ից քիչ ավելի), սակայն դրանք հետաքրքիր են իրենց իմաստային և բառակազմական կողմերով:

ա) Առանձին խումբ են կազմում բարդ բառերը. բնական (էջ 94բ), գեղաձայնիկ (գեղեցիկ ծաղիկ ունի, կամ փթթեալ գեղեցիկ ծաղիկօք». էջ 95ա), գեղեցկահիւս (ն. տ.), կեղծապաշար (կեղծական և պատրողական. կամ խաբէական». էջ 99բ), հաճախորդ (պատշաճաւոր լծակցեալ, յարմար զուգաւորեալ, կամ արժանաւորապէս կցորդեալ». էջ 102ա), մօլեկոն (թիւր, խտորնակ կրոն». էջ 103բ), վերջերքեր, տառապակիր:

⁹ Հմտ. Յ. Ա. Потиха, Д. Э. Розенталя. Лингвистические словари и работа с ними в школе. М., 1987, с. 14.

բ) Ածանցավոր բառերը համեմատաբար շատ են, բաղադրված –ախան, –աւոր, –ապէս, –ումն ածանցներով. անընդմիջապէս (էջ 93բ)¹⁰, եզերաւոր (սողորմազական, ողբական, լալական, գովք ողբացողաց». էջ 96ա), իրաւանական (էջ 97բ), շտեմարանումն (էջ 106ա): Այստեղ կարելի է նշել նաև բալական-ձևակազմական –եմ, –իմ մասնիկներով կազմված բայերը. բազ–յօղեմ (բաղկացուցանել կամ արտադրել յօդու ինչ». էջ 94բ)¹¹, կալանաւորիմ (էջ 98բ), նրադեմ (սլուսաւորել, պայծառացուցանել և կամ իրրև զճրագ լոյս տալ». էջ 102բ): Ունենք նախատառութիւն (ստառից յառաջ դրումն կամ առաջին որքանութիւն տառից, կամ ըստ որքանութեան տառից». էջ 105բ) բառը, որը բաղադրված է, հավանաբար, –ութիւն ածանցով:

գ) Համեմատաբար քիչ են բարդածանցավոր բառերը. ազնուապետութիւն, առողարանութիւն (բառից կամ բանից գեղեցիկ և յարմար արտասանութիւն կամ վերածայնումն». էջ 94ա), դիմագրութիւն (էջ 96ա), նառապանք (նառաւ–անգ. «ընդունայն ասութիւնք կամ ստայօդ և անշարայար բանք. մերթ առասպելաբանութիւնք». էջ 102ա):

Բառակազմութեան առումով հետաքրքիր են հետևյալ մասնավոր դեպքերը. այստեղ հանդիպում է դիւրաբաղխութիւն բառը, որի դիմաց նշձ–ն ունի դիւրաբաղխութիւն: Այնուհետև, նշվում է փաստաբան բարդ բառը, որը չունի նշձ–ն, թեև կան փաստաբանական, փաստաբանեմ, փաստաբանութիւն բառահոգովածները: Եվ դա պատահական չէ, քանի որ հայերենում ևս հաճախ է նկատվում նման բառակազմություն, այն է՝ բառակազմական միջանկյալ օղակի բացթողումով հաջորդ օղակ(ներ)ին վերաբերող բառերի կազմում: Կոնկրետ դեպքում փաստաբան–ը կամ գրավոր աղբյուրներում գործածված չի եղել, որ չի մտել նշձ–ի մեջ, կամ էլ, որն ավելի հավանական է, իրոք հետագա, հետադարձ կազմություն է (հետադարձ բառակազմություն—*dérivation régressive*)¹²: Այնուհետև, բառարանում նորակազմ բառեր են հանդիպում նաև բառահոգովածների բացատրության ժամանակ: Այսպես, հեղինակը, բացատրելով փաստաբան բառահոգովածը, օգտագործում է պատ–նառախօսող բառը, որը չենք գտնում նշձ–ում: Ուստի վերջինիս համար իրրև գրավոր աղբյուր կարելի է ժամանակավորապես դիտել սույն բառարանը (էջ 110բ):

Նորակազմ բառերից յուրաքանչյուրը հանդիսանում է որոշակի իմաստի կրող, այն իմաստը, որն անմիջականորեն դրսևորված է եղել բնագրային տվյալ կիրառությամբ: Ուստի պատահական չէ, որ Եղիազար Առնշեցիի բառերի իմաստային բացատրություններին կից ամեն անգամ նշում է կիրառության էջը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր վերլուծությունը վերաբերում է նման բառերի ոչ միայն բառակազմական, այլև իմաստային–իմաստաբանական կողմին, և որ այդ նորահայտ բառերը կարող են օգտագործվել հայերենի ամբողջական բառարան ստեղծելու ժամանակ, ուստի առավել ոչ անմիջապես հասկանալի նորակազմ բառերին կից բերեցինք ներանց անմիջական իմաստային բնորոշումը: Դրանով ավելի է հեշտանալու հիշյալ բառարանագրական աղբյուրի հետագա օգտագործման աշխատանքը: Հայերենի ամբողջական բառարան կազմելու գործի արդյունավետ իրականացմանը, ինչ խոսք, յուրովսանն իր նպաստն է բերելու Եղիազար Առնշեցու ձեռագիր մատենակից բառարանը: Նրանում, ինչպես տեսանք, ևս կան բառապաշարային արժեքավոր տվյալներ, որոնք անպայման պետք է օգտագործվեն հետագայում:

Այժմ, երկրորդի մասին:

¹⁰ Նշձ–ն ունի անընդմիջապէս:

¹¹ Նշձ–ն ունի բազյօղ–ը միայն:

¹² Հմմտ. Ս. Ա. Գալստյան. Ածանցները և ածանցումը ժամանակակից հայերենում, Երևան, 1978: Յ. Ա. Халифман, Т. С. Макеева, О. В. Раевская. Словообразование в современном французском языке. М., 1983, с. 22–24.

«Համառօտ բառարանի հայոց ի ռուսաց»-ը զբաղեցնում է ՄՄՁ 6418-ի .142-ը—158ա էջերը (ընդամենը 31 էջ, չհաշված բացթողումը)։

Սույն բառարանի մասին կան սուղ տվյալներ, որոնք տեղ են գտել հայ տպագիր բառարանների պատմությանը նվիրված ուսումնասիրություններում՝ կապված հատկապես հայ-ռուսական բառարանագրության ավանդույթին հարցերի մեկնաբանությանն ու գնահատությանը։ Այսպես, այդ մասին առաջին անգամ խոսվում է Գ. Գասպարյանի մի աշխատանքում¹³։ Այդտեղ առանձին բաժնով քննարկվում է «հայ-ռուսերեն և ռուս-հայերեն առաջին բառարանները» հարցը (էջ 206—216) և ակնարկվում նաև Եղիազար Առնշեցու սույն բառարանը, նշելով, որ «Հայաստանում, պարսկական տիրապետության օրով... արժանի գործ է Եղիազար Տեր-Կարապետյան Առնշեցու «Համառօտ բառարանի հայոց ի ռուսաց լեզու» աշխատությունը (և տողատակին հղում է ՄՄՁ 6418)¹⁴։ Եվ ուրիշ ոչինչ։ Բառարանին, գրեթե նույն մոտեցումով, Գ. Գասպարյանն անդրադառնում է հետագա աշխատության մեջ, որտեղ նշում է հետևյալը. «Հայաստանում, պարսկական տիրապետության օրով զբաղված բառարանները մնացել են ձեռագիր վիճակում, մոռացված։ Դեռ նախքան ռուսական տիրապետությունը Հայաստանում կազմվել են ռուսերենին առնված մի շարք շատ գործնական բնույթ կրող բառարաններ, որոնց մեջ հիշատակության արժանի գործ է Եղիազար Տեր-Կարապետյան Առնշեցու «Համառօտ բառարանի հայոց ի ռուսաց լեզու» աշխատությունը» (այստեղ ևս տողատակին հղում է ՄՄ նույն ձեռագիրը)¹⁵։ Երկու դեպքում էլ մեկնաբանությունն ու գնահատությունը, անկախ ժամանակային տարբերությունից, որի բնթացքում պիտի զարգացում ապրեր ուսումնասիրության ոլորտը, մնացել էն նույնը, առանց որևէ փոփոխության։ Իսկ դա, ինչ խոսք, առհասարակ քիչ է, շատ քիչ, նույնիսկ ոչինչ չասող։ Եվ այսօր նման հարցադրումն ու լուծումը չեն կարող բավարարել հայերենագիտության արդիական պահանջները, առավել ևս հայ բառարանագրության պատմությանը ներկայացվող պահանջները։ Այսօր այդ ուղղությամբ պահանջները մեծ են, անելիքները՝ շատ։

Բառարանը գրված է երկսյուն, բնականաբար, այբբենական հերթականությամբ։ Բառահոգվածներն սկսվում են էջ 143ա-ից մինչև էջ 157ա-ն, իսկ էջ 157բ-ն բաց է թողնված հակառակ էջից թանաքը ներծծված լինելու պատճառով, էջ 158ա-ում 1-ին սյունակի վերևի մասում գրված է միայն 4 բառահոգված (մեղի, մեղի, մեղալ, մեղալալ)։

Բառարանն ընդգրկում է 742 բառահոգված։ Կան բառահոգվածներով խիտ և նոսր էջեր. ամենախիտը 145ա, 148բ էջերն են, որոնք պարունակում են 31-ական բառ, իսկ ամենանոսրը (չհաշված նշյալ 158ա-ն՝ հայտնի պատճառով)՝ էջ 150ա-ն, որն ունի 21 բառահոգված։ Ուստի պարզվում է, որ յուրաքանչյուր էջում զետեղված է մոտավորապես 24 բառահոգված։ Այստեղ ևս նման տատանումը բացատրվում է բառահոգվածների մեկնաբանումների դեպքում նկատվող տարբերություններով։

Սույն բառարանի բառահոգվածները կառուցված են հետևյալ կերպ. նըշվում է հայերեն (գրաբար՝ թե՛ արժեքով և թե՛ ուղղագրությամբ) բառը, փակագծում տրվում է նրա ձևաբանական բնութագիրը (հղումներ՝ ըստ եզակի սեռական և գործիական հոլովների ձևերի, և խոնարհումը՝ ըստ անորոշի և անցյալ կատարյալի եզակի 1-ին դեմքի ձևի), դրվում է բառի խոսքիմասային պատկանելությունը (ասենք՝ գոյական, բայ, ածական և այլն), տրվում է թարգմանությունը (մեկ կամ մի քանի բառով)՝ իբրև հայերեն բառի արտացոլումը (իմաստային համարժեք)։ Ըստ այդմ նկատելի է, որ բառահոգ-

13 Գ. Գասպարյան. Հայ-ռուսական բառարանագրության ներդրումը հայ կուլտուրայի մեջ.— Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտի աշխատությունների ժողովածու. հ. 3, Երևան, 1948, էջ 193—291։

14 Նույն տեղում, էջ 208։

15 Գ. Գասպարյան. Հայ բառարանագրության պատմություն, էջ 104—105։

վածն ունի 4 աստիճան՝ բառը, քերականական նշումը, խոսքիմասային հատկացումը և ուսերեն թարգմանությունը: Բերենք հետևյալ օրինակները (ուսերեն բառերը տալիս ենք ձեռագրում եղած ուղղագրությամբ): ազգական (ի, աւ), ած., родня, родственный (էջ 143ա), ածելի (ւոյ, եաւ), գոյ., брѣтва (ն. տ.), ախանաւոց (ի, աւ), ած., энаменатыѣ (ն. տ.) և այլն:

Եղիազար Առնշեցու սույն բառարանը, բացի վերը նշվածից, աչքի է ընկնում հետևյալ հետաքրքրական կողմերով: Բառարանում տեղ են գտել ոչ միայն հասարակ, այլև հատուկ գոյականներ՝ անձնանուններ և տեղանուններ: Օրինակ՝ Աքիմէլէֆ (այ, աւ), գոյ., Ахимелехъ (այդպես է բնագրում—Վ. Հ.) (էջ 143 ա). Բաբիլոն (ի, իւ), գոյ., Вавилонъ (էջ 145 բ). Բեքտաբէ (ի, իւ), գոյ., Вюсебея, Верше (այդպես է բնագրում—Վ. Հ.) (էջ 146 բ), Բենիամին (նի, աւ), գոյ., Вениаминъ (ն. տ.) և այլն: Հեղինակը որոշ հարցերում հանդես է բերում թերացումներ՝ դատելով բառագիտական, ինչպես նաև ուղղագրական-ուղղախոսական ընդունելի կանոններից: Սա պետք է նշել ոչ կտրուկ մոտեցումով, այլ այն նկատառումով, որ դրանք այնուամենայնիվ շեղումներ են թեկուզ իր ժամանակի լեզվական կանոնականությունից: Այսպես, ամենուրեք ստույգ և կանոնական գրաբար ձևերի կոդեքս նկատելի են չնչին շեղումներ, օրինակ՝ ձուլածու, փխ. ձուլածոյ (էջ 156 բ): Կան վրիպումներ ուսերենի նորմայից, օրինակ՝ կին ~ жена. сурька, փխ. з-ով, թերևս խոսակցական հայերենի ազդեցությամբ. մետասան ~ одиннадцать, փխ. одиннадцать (էջ 158 ա) և այլն:

«Համառօտ բառարան ի հայոց ի ուսաց»-ում ևս գտնում ենք այնպիսի բառեր, որոնք չկան ՆՀԲ-ում: Դրանք ևս նույնպիսին են, ինչպիսին որ էին առաջին բառարանում տեղ գտածները: Սակայն, ի տարբերություն նախորդի, այստեղ դրանք անհամեմատ քիչ են, նույնիսկ մեկ-երկու օրինակ: Այդուհանդերձ, դրանք ևս արժանի են ուշադրության՝ առհասարակ հայոց լեզվի բառապաշարի պատմության տեսակետից: Բառարանի ողջ բառացանկը համեմատելով ՆՀԲ-ի տվյալների հետ, պարզվում է, որ այստեղ ունենք ընդամենը 4 բառ, որ բառարանագրված չէ ՆՀԲ-ում: Այդ նշանակում է, որ ընդհանուր առմամբ դրանց նախնական գործածությունը կասկածելի է: Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե դրանք կոնկրետ որ ժամանակում են գործածվել, ապա մնում է մի տեսակ առկախ, և այդ հարցը առայժմ լուծելի է հարաբերականորեն: Քանի դեռ, առհասարակ, հայտնի չէ այդ բառերը պարունակող մեկ այլ աղբյուր, ապա դրանք պիտի ժամանակավորապես վկայակոչվեն Եղիազար Առնշեցու սույն բառարանի հիման վրա: Ունենք հետևյալ նորակազմ բառերը. զոհաբերութիւն (թեան, թեամբ), գոյ., закланіе, даръ (էջ 149 բ), հացագործութիւն (թեան, թեամբ), գոյ., хлебники (էջ 155 ա), հիմնաւորութիւն (թեան, թեամբ), գոյ., основаніе (էջ 155 բ): Բառակազմորեն դրանք առաջացել են զոհաբեր, հացագործ և հիմնաւոր (կամ հիմնաւորեմ) բաղադրվող հիմքերից գոյականակերտ նույն՝ -ութիւն ածանցով: Նկատենք, որ բաղադրվող հիմքերն իբրև ինքնուրույն բառեր բառարանագրված են ՆՀԲ-ում, այսինքն՝ ունեն նախնական գործածություն: Բառակազմական պատճառաբանվածությունը (մոտիվացիան) միանգամայն բնական է, լեզվի զարգացման ընթացքին համապատասխան:

Եղիազար Առնշեցու սույն բառարանում հանդիպում է հասարակութիւն բառը: Հայտնի է, որ ՆՀԲ-ում այդ բառը բառարանագրված է: Այստեղ, սակայն, ունենք բառի իմաստային նոր կիրառության դրսևորում: Եղիազարն այն դնում է իբրև ուս. общество բառի համարժեք թարգմանությունը. հասարակութիւն (թեան, թեամբ), գոյ., общество (էջ 155 ա): Այս նշանակում է, որ նոր ժամանակներում բառը ձեռք բերած է եղել այդ նոր նշանակությունը, որը հետզհետե բռնում է նախորդ նշանակությունների տեղը և դառնում առաջնային: Այս դեպքում գործ ունենք այնպիսի իմաստային փոփոխության հետ, որն արդյունք է իմաստի ընդլայնման, առնված հասարակա-

կան կոնկրետ պայմանների փոփոխության, բարելավման հարաբերությամբ¹⁶։ Մենք տվյալներ ունենք այն մասին, որ XVIII դարում այդ նոր իմաստով հայերենում (նոր շրջանի գրաբարում) գործածվում է հասարակապետություն բառը¹⁷, որը ոչ այլ ինչ է, քան նախկինում եղած հասարակություն բառի իմաստային նոր կիրառության փոխարեն նորովի կազմված բառ։ Իսկ նրանից հետո հանդես է գալիս հասարակություն-ը իմաստային նոր կիրառությամբ։ Այդ գործածության աղբյուրն առաջին նշում ենք Եղիազար Առնշեցու սույն բառարանի տվյալների հիման վրա։

Այսպիսով, XIX դարի հայ ձեռագիր բառարանների մեջ իր որոշակի կարեորությունն ունեն Եղիազար Առնշեցու մատենակից ղույզ բառարանների։ Դրանք կազմվելիս են եղել գործնական նպատակով, ներկայացնում են բառարանագրական ինչ-ինչ առանձնահատկություններ, պարունակում են այնպիսի բառեր, որոնք չեն հանգիստում գրաբարի բառարաններից հատկապես ՆՁԲ-ում։ Եղիազար Առնշեցու բառարանների բառապաշարի տվյալները անհրաժեշտաբար պիտի նկատի ունենալ մեր օրերում ձեռնարկվող հայերենի պատմական բառարանի ստեղծման ժամանակ։

ЕГИАЗАР АРИНДЖЕЦИ—ЛЕКСИКОГРАФ

В. Г. АМБАРЦУМЯН

Резюме

Рукописи №№ 3362 и 6418 Матенадарана им. Маштоца в Ереване кроме других сочинений Егиазара Аринджеци (XIX в.) содержат также два его словаря: а) «Новые слова сей книги» (т. е. «Риторика».—В. Г., рукопись № 3362, с. 93а—111а), б) «Краткий словарь с армянского на русский» (рукопись № 6448, с. 142а—158а). Они интересны не только с точки зрения истории армянской лексикографии, но и развития лексики армянского языка вообще. Лексический материал словарей подвергается детальному анализу исходя из принципов армянского словообразования и семасиологии. Проводится идея о том, что в дальнейшем они должны учитываться в качестве письменных достоверных памятников при составлении большого исторического словаря армянского языка.

16 Հմմտ. է. Աղայան. Հնդհանուր և հայկական բառադիտություն, էջ 73—101, 103—103; Նույնը՝ Լեզվարանության հիմունքներ. Երևան. 1987, էջ 353—376, 377—378։

17 Տե՛ս Վ. Համբարձումյան. XVIII—XIX դարերի գրաբար պատմագրության լեզվական բնութագիրը.—«Պատմա-բանասիրական հանգեա», 1982, № 1, էջ 75։